ՄՐՑՈՒՅԹ

ISO 27001 ստանդարտի ներդրման և հավաստագրման (սերտիֆիկացման) ծառայությունների գնման

«Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն հայտարարում է ISO 27001 ստանդարտի ներդրման և սերտիֆիկացման ծառայությունների ձեռքբերման մրցույթ:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունները, որոնք մրցույթի հայտի ներկայացման պահին ունեն Հայաստանի և արտերկրի ֆինանսական և վճարահաշվարկային հաստատություններում տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերի ներդրման առնվազն 3 տարվա փորձ և համապատասխան աշխատանքային ռեսուրսներ:

ISO 27001 ստանդարտի ներդրման հայտ ներկայացնող Մրցույթի մասնակիցը պետք է ունենա՝

- ISO 27001 և ISO 9001 հավաստագրեր
- Աշխատակիցները պետք է ունենան մասնագիտական հավաստագրեր, ինչպիսիք են CISA, CISM և ISO 27001 LA:
- Թիմի ղեկավարը պետք է ունենա հետևյալ հավաստագրերից առնվազն երկուսը CISA, CISM, CISSP, ISO 27001 LA, CDPSE:

ISO 27001 ստանդարտի ներդրման բոլոր աշխատանքները պետք է իրականացվեն տեղում:

ISO 27001 ստանդարտի հավաստագրման (սերտիֆիկացման) հայտ ներկայացնող մրցույթի մասնակիցը պետք է՝

- Հավատարմագրված լինի ISO 27001:2022 ստանդարտով՝ և ներկայացնի հավատարմագրման վկայական:
- Ունենա Հայաստանի տեղական ընկերություններում ISO 27001 ստանդարտների համապատասխանության հավաստագրում իրականացնելու առնվազն 3 տարվա փորձ:
- Աշխատակիցները պետք է ունենան մասնագիտական հավաստագրեր ISO 27001-ի ոլորտում:

Մրցույթին չեն կարող մասնակցել այն կազմակերպությունները՝
- որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ,
- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Առաջարկները պետք է ներկայացվեն մինչև 2024 թվականի մայիսի 17--ը, Երևանի տեղական ժամանակով ժամը 17:00-ը (GMT +4) փակ ծրարով, հետևյալ հասցեով՝

«Արմենիան Քարդ» ՓԲԸ
Մովսես Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բիզնես-կենտրոն, Երևան 0010:

Մրցութային առաջարկը պարտադիր պետք է պարունակի՝

- Մրցույթի առարկայի անվանումը,
- գինը՝ ՀՀ դրամով, ներառյալ ԱԱՀ,
- վճարման պայմանները
- աուդիտի իրականացման ժամկետները
- Տեղեկանք հարկային մարմնի կողմից, հարկային պարտավորությունների վերաբերյալ:
- այլ էական պայմաններ և տեղեկություններ, այդ թվում՝, աուդիտին մասնակցող աշխատանքային խմբի անդամները, աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները, մատուցման կարգը, ինչպես նաև այլ փաստաթղթերը և տեղեկությունները):

Առաջարկները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով և վավեր լինեն նվազագույնը 30 օրացուցային օրվա ընթացքում:

Այն առաջարկները, որոնք ստացվել են ArCa-ի կողմից վերը նշված վերջնաժամկետից հետո, չեն դիտարկվի գնահատման համար:

Ներկայացված առաջարկները կվերլուծվեն և կգնահատվեն ելնելով դրանց ամբողջականությունից և տվյալ հրավերի պահանջներին համապատասխանությունից:
Լրացուցիչ տեղեկությունների և պարզաբանումների համար գրել tender@arca.am,

էլ հասցեին: